

տեսնես, հաստատեր է յարաբերութիւն նախարարներու, նախագահներու եւ թագաւորներու հետ: Բոլոր օտարները հայասեր կը շինէ: Մի՛ գարմանաք, եթէ օր մը Յայերու թիւէն աւելի հայասերներ գտնուին աշխարհի վրայ: Ատափազարցին մասնագիտութիւնը ունի ստանալու պետութիւններէ քիւրներով պատուանշաններ, ինչպէս նաեւ կանգուն-կանգուն մրցանակներ: Զիչեր կան, որ պատուուած չեն ներքողագիրներով: Անոնք ալ, անշուշտ, այսօր-վաղը կ'ընդունին իրենց արուեստին, քաջագործութեանց եւ գործողութեանց արժանի պատուանշանները:

Քառասուն էջնոց տեղեկատու շաբաթաթերթ մը հազիւ բաւէ Ատափազարցիներու ստացած աստիճաններուն եւ գովեստներուն ուրախ լուրերը, պետական անձերու հետ ունեցած երկարաշունչ եւ ազգօգուտ տեսակցութիւնները արձանագրելու համար:

Ատափազարցի մը Բարեկենդանի շրջանին դիմակ ու տարազ վարձելու պէտք չունի՝ *փալեաչօ* դառնալու համար: Կրնայ դիմակաւորուիլ իր վկայականներով եւ զգեստաւորուիլ իր գունագեղ պատուանշաններով:

Պէտք չէ մոռնալ, որ կան խոնարհ Ատափազարցիներ ալ: Անոնցմէ մէկը օր մը ըսաւ.

-Յպարտ եմ ես, հպարտ եմ:

-Ինչո՞ւ,- հարցուցի:

-Որովհետեւ կուրծքս բաց է, որովհետեւ պատուանշան չունիմ: Ինծի համար միակ պատուանշանը Թագուկին համբոյրն է:

Ատափազարցին միայն պատուանշանին գերին չէ: Ան գերին է նաեւ կա՛մ իր մօրը, կա՛մ իր կնոջը: Բացառութիւններ կան: Անոնք ալ իրենց սիրուհիին գերին են:

Ատափազարցին իր հոգին կուտայ իր ընտանիքին համար: Ուրիշին ընտանիքին համար ալ մարմինը կուտայ: Այսպէսով իրեն կը մնայ իր հագուստ-կապուստը միայն: Ու այս պատճառով է, որ մերթ խրտուիլակի ձեւ կ'առնէ՝ սարսափեցնելով թռչունները:

Ատափազարցին այնքան հիւրասեր է, որ իր ճաշասենեակը դուռ չունի: Յիւրերը դուռն անգամ կերած են: